

ՀՀ ԿԳՄՄՆ <<Մարտունու Տ.Աբրահամյանի անվան
ավագ դպրոց>>ՊՈԱԿ
ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ստեղծագործական ունակությունների
զարգացումը համագործակցային ուսուցում մեթոդով

Անցկացման վայրը՝ Մարտունի

Աշխատանքի ղեկավար՝ Հ.Բեյբուրջյան

Ուսուցիչ՝ Էլիզա Հարությունյան

Դպրոց՝ <<Ձորագյուղի հիմնական դպրոց >>

Մարտունի 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ներածություն.....	1
2. Գրական ակնարկ.....	5
3. Փորձարարական մաս.....	14
4. Վերլուծություն.....	17
5. Գրականության ցանկ.....	18
6. Հավելված.....	19

Ներածություն

«Տեխնոլոգիա» կրթական ոլորտը հանդիսանում է ընդհանուր միջնակարգ կրթության բաղադրիչի մասը, որը սովորողներին զինում է անհրաժեշտ տեխնիկա-տեխնոլոգիական գիտելիքներով, հասկացություններով և ունակություններով, առանց որոնց անհնար է երկրի լիարժեք սոցիալ-տնտեսության առաջընթացը, անձի ձևավորումը, ազգային լավագույն ավանդույթների պահպանումը:

Տեխնոլոգիայի ուսուցումը արմատներով գնում է դեպի հին աշխարհի խորքերը:

Տարեց նախամարդը ժեստերի միջոցով և պարզունակ խոսքերով սովորեցնում էր իր տոհմի երիտասարդ անդամների պատրաստել և օգտագործել պարզագույն աշխատանքային գործիքներ:

Կրթել աշակերտին տեխնոլոգիական նշանակում է ձևավորել հասարակության ու պետության շահերին նպաստող անհրաժեշտ գիտելիքներով, ունակություններով և հմտություններով աշխատասեր ժամանակակից տեխնիկա-տեխնոլոգիական առաջընթացի ծանոթ, մասնագիտորեն ինքնակողմնորոշված անձ:

«Տեխնոլոգիա» հանրակրթական առարկայի հիմնական առաքելությունն է սովորողներին նախապատրաստել ժամանակակից տեղեկատվական արդյունաբերական հասարակարգում ինքնուրույն աշխատանքային կյանքին և դաստիարակել կիրթ, ստեղծագործ, նախաձեռնող և ակտիվ անձնավորություն:

Հետարդյունաբերական հասարակարգը բնորոշվում է տեղեկատվության կտրուկ աճով, ինչը 20-րդ դարի վերջին բերեց նոր տեխնոլոգիաների առաջացմանը և արտադրության տեխնոլոգիաների արագ փոփոխմանը: Համաձայն վիճակագրական տվյալների՝ մարդն իր աշխատանքային գործունեության ընթացքում ստիպված է փոխել իր գործունեությունը և դա բերում է հանրակրթական դպրոցների աշակերտների տեխնոլոգիական լայն պատրաստվածության պահանջին:

Վերջին տարիներին զգալիորեն փոխվել է «Տեխնոլոգիա» հասկացության իմաստը: Եթե նախկինում այն ուներ գործունեության հաջորդականության և նյութերի մշակման համար անհրաժեշտ սարքավորումների, էներգիայի, տեղեկությունների մասին գիտելիքների իմաստ, ապա այժմ *«Տեխնոլոգիան» ուսումնասիրում է մարդու կողմից իր նպատակների համար մատերիայի, էներգիայի և տեղեկատվության պլանավորված փոդակերպումն ու օգտագործումը:* Տեխնոլոգիան ճանաչողական գիտություն է որն ուղղված է մարդու գործունեության բարեփոխման, գիտելիքների համակարգման, գործունեության նկարագրական և վերլուծման, իրականացման և օպտիմալացման, այդ գործունեության արդյունքների, զարգացման և միջոցների ձեռքբերման և կիրառման ուսումնասիրման

Տեխնոլոգիան դպրոցում ինտեգրացման կրթական ոլորտ է, որը համադրում է գիտելիքներ մաթեմատիկայի,

Ֆիզիկայի, քիմիայից , կենսաբանությունից և այլ արդյունաբերության, էներգետիկայի, կապի, գյուղատնտեսության, տրանսպորտի և մարդու այլ գործունեություններում:

«Տեխնոլոգիան» ըստ էության գործնական-ուղղորդող ուսուցողական ոլորտ է:

Սովորողների կողմից նյութերի, էներգիայի և տեղեկատվության ձևափոխման ուսումնասիրում թույլ է տալիս նրանց ձեռք բերել այդ ձևափոխումներին տիրապետելու փորձ, օգնում է մասնագիտության և հեռակա աշխատանքի ընտրությանը: Այդպիսով ապահովվում է սովորողների հաջորդական անցումը ընդհանուրից մասնագիտական կրթությունը

«Տեխնոլոգիա» կրթական ոլորտի նպատակներն են՝

-Սովորողների պոլիտեխնիկական զարգացումը, նրանց ծանոթացումը տեխնիկայի հիմունքներին, նյութերի ձևափոխման ժամանակակից և առաջընթաց տեխնոլոգիաներին, էներգիայի փոխակերպումներին, տեղեկատվությանը՝ հաշվի առնելով տնտեսական , էկոլոգիական և ձեռնարկատիրական գիտելիքներն ու սոցիալական հետևանքները, ստեղծագործական և գեղագիտական զարգացումը, մասնավորապես՝ նախագծերի կատարման և նյութերի գեղարվեստական մշակման ընթացքում, ընդհանուր աշխատանքային և կենսապես անհրաժեշտ հմտությունների և ունակությունների տիրապետումը, այդ թվում՝ աշխատանքի կուլտուրա, ոչ կոնֆլիկտային շփում, որն անհրաժեշտ է խմբային աշխատանքի պայմաններում և ընտանիքում և ընտանիքում, ինքնաճանաչման հնարավորության

ապահովումը, մասնագիտությունների
ուսումնասիրումը, տարրական մասնագիտական փորձի
ձեռքբերումը՝ հիմնված մասնագիտական
կողմնորոշման վրա:

Այս նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է՝
Ձևավորել նոր սոցիալ- տնտեսական իրավիճակներում
ստեղծագործաբար մտածող, ակտիվ գործող և արագ
կողմնորոշվել անհատներ, որոնք կկարողանան որոշել
արտադրանքի պահանջարկը, քանակը և իրացման
ուղիները: Դրա համար սովորորողները պետք է ունակ
լինեն որոշել այս կամ այն արտադրանքի կամ
ծառայությունների ծավալի քանակը, գտնել և
օգտագործել անհրաժեշտ տեղեկատվությունը, առաջ
քաշել նոր մտքեր այս կամ այն ծագող խնդիրների
լուծման համար (կոնստրուկցիայի մշակում և
տեխնոլոգիաների ընտրություն) , պլանավորել,
կազմակերպել և կատարել աշխատանք (մեխանիզմների
կարգավորում, օպերատորական գործունեություն),
գնահատել նրա արդյունքները յուրաքանչյուր
փուլում, կարգավորել իր գործունեության և բացահայտել
արտադրանքի իրացման պայմանները,

2

ձևավորել գիտելիքներ և հմտություններ միջոցների,
նյութերի, էներգիայի և տեղեկատվության նպատակային
օգտագործման համար, ձևավորել աշխատանքային
գործունեության ընթացքում որակական և
ստեղծագործական մոտեցում, անհատի բազմակողմանի
որակների զարգացում և փոխանցվող սոցիալ-

տնտեսության պայմաններում մասնագիտական
հարմարվողունակության ձևավորումը

«Տեխնոլոգիա» առարկայի խնդիրներն են

1. Տեխնոլոգիան և աշխատանքային կուլտուրայի
ձևավորում աշխատասիրության դաստիարակում:
2. Տեխնոլոգիական գիտելիքների, գործնական և
անվտանգ աշխատանքի ունակությունների
ձևավորում:
3. Գրաֆիկական ունակությունների և կուլտուրայի
ձևավորում:
4. Նախագծային, կոնստրուկտորական և դեկորատիվ-
կիրառական գործունեության ձևավորում
5. Մասնագիտական կողմնորոշման
ունակությունների ձևավորում

«Տեխնոլոգիա» առարկայի բովանդակությունը

«Տեխնոլոգիա» ուսուցողական ոլորտի
բովանդակության մեջ հատուկ տեղ է հատկացվել ձեռքի
աշխատանքի կարևորությունը: Դրա հակառակորդները
նշում են, որ արտադրությունում ձեռքի աշխատանքը
փոխարինվում է մեքենայացվածով: Սակայն ձեռքի
աշխատանքի ներմուծումն անհրաժեշտ է այլ միտումով՝
անձի զարգացման նպատակով: Բացի այդ,
փորձնականորեն ապացուցված է, որ ձեռքի
աշխատանքը (հատկապես նախադպրոցական և ցածր
դասարանի աշակերտների մոտ) ակտիվորեն
զարգացնում է ձեռքի մանր շարունակությունը, որը
խիստ անհրաժեշտ է մտածողության ձևավորմանը:
Վերջապես, կարելի է ասել, որ ձեռքի աշխատանքի

ունակությունները դեռ երկար ժամանակ անհրաժեշտ կլինեն առօրյա կյանքում՝ հատկապես արտակարգ իրավիճակներում: Ժամանակակից դպրոցին արդարացիորեն մեղադրում են այն բանում, որ այն թողարկում են «անձեռք» սերունդ:

Տեխնոլոգիայի ծրագրերի բաժինները կարելի է անվանակոչվել հետևյալ ձևով

Տարրական դպրոց - «Տեխնոլոգիայի տարրեր»

Հիմնական դպրոց - «Տեխնոլոգիայի հիմունքներ:»

«Տեխնոլոգիա» առարկայի բոլոր բաժինները բովանդակությունները պետք է ունենան ընդհանուր գծեր՝

- աշխատանքի կուլտուրա - աշխատանքային գործընթացի պլանավորում և կազմակերպում,

3

Գործիքների և մեխանիզմների ընտրություն, աշխատատեղի կազմակերպում, աշխատանքի անվտանգության ապահովում, տեխնոլոգիական և աշխատանքային կարգապահություն, արտադրանքի որակի վերահսկում,

- Գրաֆիկական կուլտուրա - տեխնոլոգիական ընթացքն ապահովող տպագրական, գրաֆիկական միջոցների օգտագործման համար անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ
- Դիզայնի կուլտուրա - գիտելիքներ, հմտություններ և պատրաստակամություն՝ օգտագործելու էրգոնոմիկայի

գեղագիտական, դիզայնի և նյութերի
գեղարվեստական մշակման մեթոդներն
արտադրանքի մրցունակության ապահովման
համար

- Տեղեկատվական կուլտուրա - տարբեր
աղբյուրներից ստացած
գիտելիքների, հմտությունների պահպանման և
օգտագործման ունակություններ
- Ձեռնարկատիրական կուլտուրա -
գիտելիքներ, ունակություններ և
պատրաստակամություն շուկայի
պահանջարկի վերլուծության, կազմակերպման,
ղեկավարման և սեփական արտադրանքի
գովազդի ապահովման համար:
- Մարդկային հարաբերությունների կուլտուրա -
գիտելիքներ, ունակություններ և
պատրաստակամություն իրագործելու ոչ
կոնֆլիկտային (բարի դրացիական)
հարաբերություններ ինչպես
արտադրությունում, այնպես էլ տանը,
փողոցում, տրանսպորտում:
- Բնապահպանական կուլտուրա -
բնապահպանական գիտելիքներ,
հասկացություն այն մասին, որ բնությունը
կյանքի և գեղեցկության աղբյուր է, բնության
հետ շփումը հարստացնում է
բարոյագեղագիտական զգացումները:
- Նախագծային կուլտուրա - գիտելիքներ,
հմտություններ և պատրաստակամություն
ինքնուրույն որոշելու անհրաժեշտ և հնարավոր

գործունեություններ նախագծման ժամանակ,
նախագծի համար անհրաժեշտ
գործունեություններ նախագծման ժամանակ,
նախագծի համար անհրաժեշտ
տեղեկատվության հավաքում և վերլուծում, այդ
նախագծի համար նոր գաղափարների առաջ
քաշում օպտիմալ տարբերակի ընտրություն,
պլանավորում, աշխատանքի կազմակերպում և
կատարում՝ ընդգրկելով այդ ընթացքում
լրացուցիչ գիտելիքների ձեռքբերումը,
նախագծի գնահատումների ու ներկայացումը:

1. Խաչատրյան Ս.Գ. ուսուցման ժամանակակից
մեթոդները, Գյումրի 2006թ
2. Հովհաննիսյան Ս և Հարությունյան Կ

4

Գրական ակնարկ

Աշխարհը փոխում է արագընթաց տեմպերով և
անկանխատեսելիորեն:

Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր
աշխարհայացքը: Այն ինչ մի ժամանակ թվում էր
հավերժական ու անփոփոխ, այսօր միայն
հարաբերական է կամ նույնիսկ ամբողջությամբ սխալ:
Կրթության ոլորտի աշխատանքները ամենուրեք
գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման
հնացված ձևերը այլևս անկարող են ստեղծել ու
զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք

անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների
տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու
համար: Հետևաբար ինչպես հայաստանում, այնպես էլ
ամենուրեք, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և
ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ:
Դասավանդման խնդիրների լուծման նպատակով
համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից
փորձարկվող միջոցների մեկն է: Չնայած իր տարածմանը
ուսուցիչների շրջանում և երկարատև պատմությունը,
այն չի գտել լայն կիրառում: Դրա պատճառն ամեննին
սովորողների առաջընթացի և ընդհանուր զարգացման
վրա համագործակցային ուսուցման դրական
ազդեցության վկայությունները բացակայությունը
չէ: Իրականում, համագործակցային ուսուցումը
ժամանակակից կրթության, դասավանդման և
ուսուցման ամենաշատ ուսումնասիրված ոլորտներից
մեկն է: Կարճ ասած՝ գիտելիքների հասարակությունում
անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ուսուցման
վերաբերող հետազոտությունների արձագանքների
բավականին խոստումնալից են: Խիստ կարևոր է իրարից
տարբերել ավանդական խմբային աշխատանքը և
համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն
են դասավանդման ընթացքում կիրառում խմբային
աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման
գործընթացում համագործակցային ուսուցման
հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրվելու համար
անհրաժեշտ վարպետություն հենց այդ պատճառով,
համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում
դասարանում և դպրոցում կիրառվող փոքր խմբերով
աշխատանքները ավելի շատ խմբային աշխատանքներ

են, քան համագործակցային
ուսուցում: Համագործակցային ուսուցման կիրառումը
սովորելը ժամանակատար գործընթաց է: Մեկ
աշխատանքային հանդիպումը կամ սեմինարը դեռևս
բավարար չէ ուսուցիչներից պահանջվում է մեկ կամ
երկամյա մասնագիտական վերապատրաստում և
ուսուցում: Այդ ժամանակահատվածում չափազանց
կարևոր է դասարանում պարբերաբար կիրառել
ուսուցման հմտությունները, ուսումնասիրել
համագործակցային ուսուցման վերաբերյալ
գրականություն, ինչպես նաև համագործակցել
նմանատիպ գործընթացներում ներգրավված
ուսուցիչների հետ հայաստանի դպրոցները ի
տարբերություն այլ երկրների դպրոցների ավելի շատ
հիշեցնում են ուսուցիչների և սովորողների ավանդական
համայնքներ: Ուստի համագործակցային ուսուցումը
հայաստանում ունի ներդրման ու զարգացման համար
անհրաժեշտ հիմք է բարենպաստ պայմաններ:

Համագործակցային ուսուցման հենակետային խմբեր

Համագործակցային հենակետային խմբերը կայուն
անդամներով
երկարաժամկետ, տարասեռ/հետերոգեն/խմբեր են, որոնց
աշխատանքը տևում է ողջ դասընթացի կամ ծրագրի
շրջաններում: Այս խմբերի անդամները աջակցում,
օգնում և խրախուսում են՝ նպաստելով առաջադրանքի
կատարմանը և գիտելիքների ձեռքբերմանը: Այն
ներառում է բացակա ընկերներին աջակցելը, անցած
նյութը բացատրել, տնային հանձնարարությունները
կատարելու հարցում օգնելը և այլն: Դրանք մշտական

են/գործում են մեկից մի քանի տարի/և ապահովում են երկարաժամկետ, հոգատար, գործընկերային փողհարաբերություններ: Խմբերը անց են կացնում պաշտոնական հանդիպումներ՝ յուրաքանչյուր անդամի ակադեմիական առաջընթացի քննարկելու, միմյանց աջակցություն և օգնություն տրամադրելու համար, ինչպես նաև համոզվելու, որ յուրաքանչյուր անդամ կատարում է հանձնարարությունները և ունի բավարար առաջընթաց ակադեմիական ծրագրի շրջանակներում: Ոչ պաշտոնապես անդամները համագործակցում են՝ ամեն օր դասերի ընթացքում և դասամիջոցներին, քննարկում են հանձնարարությունները և օգնում միմյանց կատարել տնային աշխատանքները: Հենակետային խմբերն ունեն անձնական պատասխանատվություն՝ լսել և սատարել խմբի անդամին, երբ վերջինս ունի անձնական բնույթի խնդիրներ: Որքան մեծ է դասարանը կամ դպրոցը և բարդ ու դժվարին առարկան, այնքան ավելի կարևոր է հենակետային խմբեր ունենալը: Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում են հենց աշակերտների միջոցով: Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակման միջոցով հմուտ համագործակցողների/համագործակցային հմտություններ կիրառողներ/և գիտելիքների ակտիվ

կիրառողներ/մտածողության հմտություններ
կիրառողներ/ձևավորելը: Համագործակցային ուսուցումը
մեծացնում է նաև սովորողների ինքնուրույնությունը և
պատասխանատվությունը/ինքնաճանաչման և
ինքնուղղորդման հմտությունների կիրառումը/:

Համագործակցային ուսման կազմակերպումը

Համագործակցային մանկավարժության նպատակն
այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման
գործընթացը վերածում են սոցիալական
շփման: Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես
գործընկերների խմբի համագործակցությունն է:
Գոյություն ունեն համագործակցային կրթության և
ուսուցման բազմաթիվ մեթոդներ (նախագծերի
մեթոդը, քննարկումը, խնդիրների լուծման վրա հիմնված
և դիտարկման միջոցով իրականացվող ուսումը և այլն):
Այս մեթոդներից յուրաքանչյուրի համար գոյություն
ունեն համատեղ աշխատանքի տարատեսակ
եղանակներ, վարժություններ և առաջարկություններ:
համագործակցային մեկ ճիշտ մեթոդ գոյություն չունի,
սակայն կա համագործակցային մի քանի եղանակ. և
ավելին՝ ներկայումս գոյություն ունեն հարյուրավոր
վարժություններ և կազմակերպման
եղանակներ: Հետևաբար, ուսուցիչները կարող են այս
կամ այն մեթոդը որդեգրելու փոխարեն ընտրել տվյալ
մանկավարժական իրավիճակին համապատասխանող
լուծում, իսկ այլ իրավիճակում՝ կիրառել այլ լուծումներ:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիա

- Անձի զարգացում և անհատականության
ձևավորում

- Հոգեբանական և ֆիզիկական առողջության ապահովում
- Սթրեսի հաղթահարում.
- Առողջ հարաբերությունների դրսևորում:

Համագործակցային ուսուցման դրսևորումը

- Դրական փոխկապակցվածության ապահովում
- Դեմ առ դեմ փողազդեցություն
- Անհատական հաշվետվություն և պատասխանատու տվություն
- Միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ
- Խմբային գործընթացի մշակում
- Փողներգործուն կամ ինտերակտիվ առաջադրանքի կատարում:
- **Համագործակցային տեխնոլոգիայում կիրառվող մեթոդները և հնարները**
- Թիմային առաջադիմությունը
- Խճանկար
- Պատկերասրահում
- Խմբային հետազոտություն

Խնդիրների լուծման վրա հիմնված ուսումը

Բացի գիտելիք փողանցելուց, այս եղանակը նպատակը նպատակ է հետապնդում զարգացնել աշակերտի խնդիրներ լուծելու և համագործակցելու

կարողությունները: Խնդիրների լուծման վրա հիմնված ուսման դեպքում աշակերտը պետք է ինքնուրույն հետազոտություն իրականացվի, կարողանա ըմբռնել խնդրի էությունը, ինչպես նաև ունենա SS ոլորտում որոշ գիտելիքներ. Ուսման այս մեթոդի նպատակներից է նշված կարողությունները զարգացումը. Այս դեպքում

ուսուցիչը կատարում է համակարգողի կամ
խորհրդատուի դեր: Խնդիրների լուծման վրա հիմնված
ուսուցումն աշակերտներին սովորեցնում է, թե ինչպես է
պետք սովորել:

Աշակերտները սովորում են խմբի անդամների հետ
համագործակցությամբ՝ լուծումներ գտնելով իրական
կյանքից վերցված խնդիրների համար: Այս մեթոդի
հիմնական իմաստն այն է, որ աշակերտների
կարողությունները օգտագործվում են ոչ թե պատրաստի
գիտելիք տրամադրելու, այլ գիտելիք քաղելու
նպատակով: Այն դասարաններում, որտեղ
աշակերտներն այս մեթոդն են կիրառում, նրանք
հասկանում են, թե ինչպես է ուսումը դառնում գիտելիքի
որոնման գործընթաց: Աշակերտների մոտ ձևավորում է
քննադատական մտածելակերպ, որն իրենց
հնարավորություն է տալիս ձեռք բերվող
տեղեկությունները փոխկապակցվածության այն
նպատակի հետ, որի իրականացման համար կարող են
օգտագործվել այդ տեղեկությունները: Խնդիրների
լուծման և ուսման գործընթացի հաջողությունները
կախված է աշակերտների դպրոցական և
արտադպրոցական արդյունավետ աշխատանքից:
Առաջադրանքների խմբային կատարումը խնայում է
Ժամանակը և զարգացնում է խմբի անդամների խմբային
կատարումը խնայում է Ժամանակը և զարգացնում է
խմբի անդամների շփման և բանավոր խոսքի
կարողությունները:

Խնդիրների լուծման վրա հիմնված ուսումը
նորարարական մեթոդ է, որի դեպքում օգտագործում
են նոր նյութը լուծում պահանջող խնդրի տեսքով

ներկայացման մանկավարժական կառուցողական մեթոդները:

Այս մեթոդի կիրառման հիմնական քայլերն են՝

- ա) առաջադրանքի սահմանումը
- բ) տեղեկատվությունը որոնման տարատեսակ ռազմավարությունները ,
- գ) տվյալների և տեղեկություններ ստանալու մատչելիությունը(որտեղ),
- դ) տեղեկատվությունների օգտագործումը և խնդիրների լուծումը,
- ե) սինթեզը,
- զ) գնահատումը:

Համագործակցային քննարկում

Համագործակցային քննարկումը աշակերտների հաղորդակցման և պարտիզանական կարողությունները զարգացնելու լավ եղանակ է: Քննարկման ընթացքում բոլոր մասնակիցները հնարավորություն ունեն խոսելու (պայմանով, որ սահմանված կանոնները պահպանվում են):

Այս եղանակի փուլերն են՝

- ա) քննարկումը վարողն առարկայի վերաբերյալ հակասական հայտարարություններ էանում: Այդ հայտարարություններ փակցված են սենյակի տարբեր մասերում.
- բ) յուրաքանչյուր աշակերտ, ըստ իր կարծիքի/ընկալման, կանգնում է այդ հայտարարություններից մեկի մոտ.

գ) քննարկման համար խմբեր ձևավորելու հետո վարողը ժամանակ է սահմանում հնչեցված հայտարարությանը կողմ փաստարկները ներկայացնելու համար.

դ) փաստարկները պատրաստելու հետո յուրաքանչյուր խումբ ընտրում է իր խոսնակին.

ե) խոսնակները նստում են սեղանի շուրջ և ստանում այսպես կոչված «քննարկման խաղանիշներ» (3_6 հատ՝ կախված քննարկման համար սահմանված ժամանակահատվածի և մասնակիցների թվից):

զ) խմբի անդամները շարվում են իրենց խոսնակի հետևից և նույնպես չափանիշներ են ստանում:

Խաղանիշերն օգտագործվում են հետևում կանգնած աշակերտներին քննարկման մեջ ներգրավվելու

նպատակով: Որպես այլընտրանք , խմբի անդամներին իրենց չափանիշները կարող են տալ իրենց խոսնակին, եթե վերջինս սպառել է իր բոլոր խաղանիշերն, սակայն դեռևս ներկայացնելու փաստարկներ ունի.

է) իր փաստարկներից յուրաքանչյուրն ներկայացնելիս խոսնակին իր խաղանիշերն մեկը դնում է սեղանի կենտրոնում: Խաղանիշերն որոշում են ելույթների թիվը:

Մեկ փաստարկի գինը մեկ խաղանիշ է: Այս եղանակն օգտագործելով՝ ուսուցիչը ոչ միայն կառավարում է քննարկման ժամանակը, այլև աշակերտներին սովորեցնում է իրենց փաստարկները ձևակերպել հստակ և հակիրճ:

Դերախաղը՝ որպես ուսուցման եղանակ

Ստեղծագործական դերախաղը գիտելիքն անձնավորելու փորձ է:

Որպես հիմնական հասկացություններ հանդես են գալիս դերը և նույնացումը: Դա նշանակում է, որ աշակերտները դեր են խաղում՝ փորձելով պատկերացնել, թե ինչ կանեին տվյալ դերում կամ իրավիճակում հայտնվելու դեպքում: Կախված առաջադրանքից՝ նրանք կարող են մարմնավորել հենց իրենց՝ որոշակի իրավիճակում, կամ էլ որոշակի բնութագիր ունեցող: Բայց նույնիսկ վերջին դեպքում աշակերտի անձը փոխազդեցության մեջ է մտնում իր կողմից մարմնավորվող կերպարի հետ: Ահա թե ինչպես, իդեալական դեպքում, նրանք կարող են հասկանալ խնդիրը սեփական փորձառության միջոցով:

Տարբեր իրավիճակային վերլուծությունների համար անհրաժեշտ է ցուցաբերել էմպատիայի տարբեր աստիճաններ: Օրինակ՝

- ա) էմպատիան բարելավելուն ուղղված պարզ վարժություններ,
 - Բ) դիլեմայի, որոշումների կայացում,
 - գ) համատեղ որոշումներ,
 - դ) ներկայացման պատրաստում
 - ե) հայտնի պատմությունների ներկայացում
- դերախաղը միջոցով,
- զ) իրավիճակային խաղեր,
 - է) ուսումնավարժանք,
 - ը) լուսանկարների պաստառ/հավաքածու,
 - թ) դատախազ,
 - ժ) բանավեճ:

Դերախաղը դերն ուսումնական գործընթացում

Դերախաղը, ինչպես նաև գործնական աշխատանքի վրա հիմնված մեթոդի դեպքում հարց է ծագում՝ արդյոք այն պետք է նախորդի, թե՞ հաջորդի ուսուցչի կողմից նոր թեմայի ներկայացմանը (եթե, իհարկե, նման ներկայացումը տեղի է ունենում դասի ընթացքում): Համաձայն ավանդական տեսակների, դերախաղը խաղ է, որը պետք է անցկացնել միայն լուրջ աշխատանքն ավարտելուց հետո . ավելին անհնար է որևէ բան ներկայացնել, երբ աշակերտները դեռևս չեն յուրացրել տվյալ նյութի փաստերը: Որոշ դեպքերում դա այդպես է, որոշ դեպքերում՝ ոչ: Հաճախ աշակերտների համար դերախաղը դառնում է անհետաքրքիր, երբ արդեն հայտնի է, թե նրանք ինչպես պետք է գործեն: Մինչդեռ, եթե աշակերտներին որոշակի իրավիճակ են ներկայացնում, նրանք կարող են իրենց անձնական փորձը համադրել ներկայացվող գիտելիքն հաջորդիվ:

Կազանի մեթոդով համագործակցային ուսման եղանակը

Դոկտոր Սպաներ Կազանի « համագործակցային ուսուցում » աշխատությունը հրապարակվել է 1985 թվականին (Սան Կլեմենտե, Կալիֆորնիայի նահանգ. Kagan publishing) : Այս գիրքը ուսուցման եղանակների ամենալիարժեք և ամենաարդի ժողովածուն է: Այն չի առնչվում որևէ այլ մեթոդի. Դրանում ներկայացված մեթոդը հայտնի է որպես Կազանի մեթոդ: Այն մեթոդներից կազմված ժողովածու է, որոնք տեսակավորված են հիմնականում ըստ աշակերտների կարողությունների: Կազանի մեթոդի

հիմքում դրված է համագործակցային գաղափարը, և այդ մեթոդով փորձ է կատարվում հաշվի առնել անհատական յուրահատկությունները:

Ուսուցանում-ուսանում գործընթացն ունի երկու նպատակ՝

- Տվյալ առարկայի նպատակը՝ դասավանդող նյութի հիման վրա զարգացնել ճանաչողական հմտությունները:

Սոցիալական նպատակը՝ առաջինը, աշակերտները պատասխանատվություն են ստանձնում:

Երկրորդ, նյութը դասավանդվում է համագործակցության վրա հիմնված տարբեր եղանակներով, ինչն իր հերթին զարգացնում է նաև աշակերտների շփման հմտությունները:

Համագործակցության վրա հիմնված ուսումը խմբային ուսուցման ամենաբարձր մակարդակն է: Խմբի ձևավորման այս եղանակի դեպքում խմբի անդամները մեծապես ապավինում են միմյանց, ուստի զուտ առարկային առնչվող նյութեր յուրացնելու բացի նրանք ձեռք են բերում նաև շփման

հմտությունները: Ուսուցիչներից աշակերտներից չի պահանջում նման հմտություններ ունենալու.

փոխարենը, նա նպաստում է դրանց զարգացմանը՝ կիրառելով համագործակցության ապահով տարատեսակ մեթոդները:

Ի տարբերություն Կազանի մեթոդի, ավանդական խմբային աշխատանքը չի պահանջում

համագործակցության այդքան սերտ մակարդակ, և

պարտադիր չէ, որ հաջողությունը պայմանավորված լինի բոլոր աշակերտների մասնակցությամբ:
Ուսման գործընթացի կազմակերպումը բաղկացած է 6 հիմնական տարրից:

Խումբ

- Համատեղ աշխատող խումբը բաղկացած է 3-6 մշտական անդամներից : Խմբի անդամների միջև կապը սերտ է. նրանք ճանաչում, ընդունում և աջակցում են միմյանց:
- *Խմբի կազմը միատարր չէ՝* մասնակիցների ընդունակությունները, սեռը, համակրանքը և էթնիկական ծագումը տարբեր են:
- *Խմբերի ձևավորման եղանակը՝* պատահական կամ նպատակային:
- Պարտականությունները խմբում, օրինակ՝
 - քարտուղարը պատասխանատու է ճիշտ խոսքի համար.
 - ժամանակը հաշվարողը պատասխանատու է ժամանակային սահմանափակումների հետևելու համար.
 - աշխատանքների կատարման պատասխանատվություն ապահովում է բոլորի կողմից իրենց աշխատանքի պատշաճ կատարման ու խմբում արդյունավետ հաղորդակցությունը.
 - խոսնակը պատասխանատու է ուսուցչի հետ կապ պահպանելու համար զեկուցում է կատարված աշխատանքի մասին և ներկայացնում կատարված աշխատանքը:

- Խմբում առաջադրանքների բաշխումը , աշխատանքի կազմակերպման ու կիրառվելու մեթոդաբանություն որոշումը(օրինակ՝ «Կլոր սեղան», «Բառերի շրջապտույտ», «Խճանկար» և այլն):

Դասարանի կառավարումը

- Դասարանը պետք է դասավորված լինի այնպես, որ աշակերտները հեշտությամբ հաղորդակցվել իրենց խմբի մասնակիցների հետ:Խմբային աշխատանքի ընթացքում աղմուկի մակարդակը կարգավորելու համար պետք է նախապատրաստել որոշակի նշան կամ խորհրդանշական (որի շուրջ դասարանը նախապես համաձայնության է եկել):
- Սահուն և արդյունավետ աշխատանքի համար պայմաններ ապահովելու նպատակով գործիքների տեղը և աշխատանքի վայրը պետք է անփոփոխ մնա:

Համագործակցելու նպատակը

- Գոյություն ունի աշակերտների՝ համագործակցելու ցանկությանը նպաստելու և այն պահպանելու երեք եղանակ՝
- «համայնքի» (խումբ, դասարան) ձևավորում,
- Համագործակցային առաջադրանքներ,
- Խրախուսման և գնահատման համակարգի կիրառում:

Համագործակցելու պատրաստակամությունը

- Շփվելու հմտությունները զարգացնելու համար կարելի է օգտագործել մի շարք վարժություններ.
- Մոդելավորվող ուսումնական խումբ,
- Համատեղ մեկնաբանություն
- Դերախաղը,
- Դիտարկում
- Փոխօգնության
- Պարտականությունները որոշում/բաշխում:

Համագործակցային ուսման հիմնական սկզբունքները

Եթե հետևյալ բոլոր սկզբունքները չեն պահպանում, համագործակցային ուսումը տեղի չի ունենում: Չորս հիմնական սկզբունքները (Սպաներ Կազանի համաձայն)՝

ա) Զուգահեռաբար տեղի ունեցող շփումներ՝ ուսման գործընթացում աշակերտների միջև տեղի են ունենում բազում շփումներ: Այսպիսով, յուրաքանչյուր անհատ աշակերտի ակտիվ մասնակցության տևողությունը շատ ավելի երկար է, քան այն կլինի ավանդական եղանակով ուսուցման դեպքում:

բ) *Անձնական պատասխանատվություն*՝

աշակերտներից յուրաքանչյուրը պետք է ավարտի աշխատանքի իր բաժինները՝ խմբի աշխատանքում ներդրում կատարելու համար: Յուրաքանչյուր աշակերտ իր աշխատանքի մասին զեկուցում է խմբին:

Դասընկերներն գիտեն խմբում ներգրավված յուրաքանչյուր աշակերտի ներդրման մասին, և յուրաքանչյուր անձ պատասխանատու է առաջադրանքների կոնկրետ մասի համար:

Գ) *Կառուցողական փոխկապակցվածություն*՝ անհատական զարգացումն ու խմբի զարգացումը դրականորեն փոխազդում են միմյանց, եթե աշակերտների զարգացման համար պահանջվում է դասընկերներն զարգացումը, և եթե խմբի հաջողությունը միաժամանակ նշանակում է նաև մեկ այլ խմբի հաջողություն:

Դ) *Հավասարաչափ մասնակցություն*՝ աշակերտները մասնակցում են աշխատանքին ըստ իրենց ընդունակությունների: Այս նպատակին հնարավոր է հասնելու աշխատանքի բաշխման և առաջադրանքների հանձնարարելով միջոցով:

Եղանակներ

- Ուսուցման համագործակցային եղանակների յուրաքանչյուրն իր կիրառությունը ունի, քանի որ դրանցից յուրաքանչյուրը իր կիրառությունը ունի, քանի որ դրանցից յուրաքանչյուրը կարող է կիրառվել տարբեր իրավիճակներում: *Ուսուցման եղանակն ընտրելիս պետք է հաշվի առնել*՝
- Աշխատանքի համար հատկացված ժամանակը
- Վարժություններ տեսակները
- Դասերի տեսակները
- Բովանդակությունը
- Փոխկապակցվածության աստիճանը

Վերը նշվածը համաձայն՝ ստորև ներկայացվում են ուսուցման համագործակցային աշխատանքի մի շարք եղանակները , որոնք նախատեսված են տարբեր իրավիճակներում կիրառության մեջ դնելու համար՝
ա) **Խումբը ձևավորելու եղանակը**՝ խմբի ձևավորման «պատահական» եղանակ: Այս դեպքում նկարները կոտրատվում են մասերի՝ խմբում ընդգրկված աշակերտների թվին

համապատասխան: Յուրաքանչյուր աշակերտի տրվում է նկարի մեկ կտոր : Նրանք պետք է փոխանակեն նկարի կտորները միմյանց հետ: Յուրաքանչյուր աշակերտ պետք է առնվազն մեկ անգամ փոխանակի նկարի իր կտորը: Այնուհետև աշակերտները պետք է գտնեն, թե ում մոտ է նկարի :մյուս մասը՝ նկարն ամբողջությամբ կազմելու համար: Այս եղանակով խմբերը ձևավորում են պատահականորեն, մինչդեռ, եթե նկարի կտորները հետևի մասում գրավեն աշակերտների անունները, ուսուցման այս եղանակը հնարավոր է օգտագործել նպատակային կերպով խումբ ձևավորելու համար:

Բ) **նոր թեմայի ընկալման նպաստող եղանակ**

Երեք քայլից բաղկացած հարցազրույց

Ուսուցիչը խմբի անդամներին տալիս է Ա, Բ, Գ, Դ տառերով քարտեր:

Յուրաքանչյուր աշակերտի տրվում է տարբեր տեքստ և վարժարան:

Խմբի յուրաքանչյուր անդամ կարդում է իր վարժությունն ու տեքստը և նշումներ է կատարում:

1. «Ա» աշակերտը , «Բ» - ին պատմում է իր տեքստի մասին, մինչ «Գ» -ն զրուցում է «Դ» -ի հետ իր տեքստի մասին:

2. «Բ» -նոր պատմում է «Ա»- ին, իսկ «Դ»-նոր պատմում է «Գ»- ին իրենց կարդացած մասին:

Բամբասանք ' «Ա»-ն «Գ»- ին և «Դ»- ին պատմում է այն , ինչ լսել է «Ա»-ից: Այնուհետև «Գ»- ն կրկնում է այն, ինչ իրեն պատմել է «Դ»-ն, իսկ «Դ»-ն կրկնում է «Գ»- ից լսածը:

Խմբի անդամները նշումներ են անում կամ լսում են ուրիշներին, որպեսզի չորս անդամներն էլ ծանոթանանք տեքստի հետ:

գ) **Ուսուցման ամփոփման և համակարգման եղանակ**
Կլոր սեղան

Այս եղանակն օգտակար է՝

- ներկայացում պատրաստել,
- աշակերտների կողմից որոշակի տեղեկությունների ըմբռնումը ստուգելու,
- «ուղեղների գրոհ» անցկացնելու(կարծիքների ստեղծում՝ կոլեկտիվ քննարկման արդյունքում),
- աշակերտներին ստուգելու և

գործնական աշխատանքի անցկացնելու համար

Այս վարժությունը կատարելու համար խմբի

անդամներին անհրաժեշտ է օգտագործել թուղթ և գրիչ:

Աշակերտներից մեկը որևէ բան է գրում թղթի վրա,

այնուհետև փոխանցում է այդ թուղթն ու գրիչը իրենից ձախ գտնվող աշակերտին:

Գործիքները պարզապես շրջանաձև փոխանցում են միմյանց, որից էլ առաջացել է մեթոդի «կլոր սեղան »անվանումը:

դ) **Ստուգման և գնահատման եղանակները**

Վարժության փոխանցում. որակի հսկողությունը և գնահատումը խմբում

Յուրաքանչյուր խումբ (նախօրոք ձեռք բերված համաձայնությամբ) մյուսներին որևէ հարց է ուղարկում, իսկ վերջիններս նրանց են ուղարկում դրա ճիշտ պատասխանը: Այդպես խմբերին ինքնաստուգում են իրականացնում:

Ըստ Կազանի, ուսուցման համագործակցային մանկավարժության կիրառումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ կիրառվում են բոլոր չորս հիմնական սկզբունքները:

Աշակերտների
ներգրավվածության
ապահովումը
համագործակցային մեթոդով

Փորձարարական մաս 3-1 խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը իրականացնում եմ Գեղարքունիքի մարզի Ձորագյուղի Հայրիկ Ղազարյանին անվան հիմնական դպրոցի 5 – րդ դասարանում, որտեղ սովորում են 26 աշակերտ, 9 աղջիկ և 17 տղա :

Որտեղ իմ առարկան անցնում են շաբաթը մեկ և որը տեղադրված է դասացուցակում ուրբաթ օրը 6-րդ ժամին: Քանի որ ես ունեմ աշակերտներ, որոնք չեն ներգրավվում դասապրոցեսին, ես որոշեցի իմ հետազոտական աշխատանքը իրականացնեմ այդ աշակերտների համար: Ես իմ երկու դասերը կկազմեն համագործակցային մեթոդով ապահովելով նրանց ներգրավվածությունը դասապրոցեսին:

3-2 Փորձարարական դաս N 1

Այսօրվա իմ դասի թեման է « Գծերի տեսակները»: Դասը սկսվեց ողջույնով, ներկա բացակայող, տնային աշխատանքների ստուգմամբ:

Քանի որ տնայի աշխատանքում կար որոշակի սխալներ , կատարվեցին շտկումներ , տրամադրելով բանավոր հետադարձ կապ:

Դասը սկսվեց «մտազրոհ» մեթոդով, գրատախտակի գրվեց «գիծ» բառ և կազմակերպվեց քննարկում, որին մասնակցեցին դասարանի գրեթե բոլոր աշակերտները: Այնուհետև նոր թեման կազմակերպվեց հարցադրումների մեթոդով:

Քանի որ իմ դասարանում կար չորս կներգրավվի աշակերտներ, ես իմ ուշադրության կենտրոնում պահել էի այդ չորս աշակերտներին, հաճախ կազմակերպվում էր անվանակոչված հարցադրումներ նրանց նկատմամբ : Այս աշակերտների ներգրավվածությունը դասի հաջորդ փուլին ներգրավվելու համար կազմակերպվեց խմբային աշխատանք համագործակցային մեթոդով:

Դասարանը բաժանվեց չորս խմբի, որտեղ յուրաքանչյուր խմբում ընդգրկվեց մեկ ներգրավվող աշակերտ: Խմբերին բաժանվեց նախապես կազմված քարտերը, բաշխիչ նյութերը, թուղթ, գիրք, տետր ,քանոն, ՀՈՄատիտներ, ռետին, կարկին և գրիչներ: Յուրաքանչյուր խումբը սկսեց աշխատել իր խմբի առաջադրանքների վրա կատարում են գծապատկերում, կազմակերպում են քննարկում, միմիանց տալիս են հարցեր և յուրաքանչյուր խմբի մեկ ներգրավվող աշակերտ ուսուցչի պահանջով ներկայացնում է իր խմբի աշխատանքը:

Խմբի անդամները անհրաժեշտության դեպքում, լրացնում են կամ օգնում իրենց ընկերոջը: Ամեն մի խմբից մեկ աշակերտ պատասխանում է մեկ հարցադրմանը ըստ անհրաժեշտության, ընկերները կատարում են լրացումներ:

Սովորողների գիտելիքները տվյալ հարցի վերաբերյալ խորացնելու և ամրապնդելու նպատակով «քառաբաժան» մեթոդի միջոցով պարզել սովորողների զգացողությունները, ինչպես նաև նյութի ը կախման աստիճանը:

1. Ի՞նչ գիտեին

2. Ի՞նչը նոր իմացան
3. Ի՞նչն էր, որ այդպես էլ անհասկանալի մնաց:
4. Ի՞նչ զգացողություններ ունեիք դասի սկզբում և դասի վերջում:

Վերջում կատարվեց գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում:

3-3 Փորձարարական դաս N 2

Այսօր իմ դասի թեման է *«Մանածագործական նյութեր, բնական և արհեստական մանրաթելեր»:*

Դասը սկսվեց ողջույնով, ներկա բացակայող, տնային աշխատանքների ստուգումով:

Քանի որ տնային աշխատանքում կար որոշակի սխալներ, կատարվեցին շտկումներ, տրամադրելով բանավոր հետադարձ կապ:

Դասը սկսվեց «Մտագոհ » մեթոդով գրատախտակի գրվեց «Մանրաթելեր » բառը և կատարվեց քննարկում, որին մասնակցում էին դասարանի գրեթե բոլոր աշակերտները, այնուհետև նոր թեման կազմակերպվեց հարցադրումների միջոցով:

Քանի որ իմ դասարանում կար չորս ներգրավված աշակերտներ էս իմ ուշադրության կենտրոնում պահել

Էի այդ չորս աշակերտներին, հաճախ կազմակերպվում էր անվանակոչվել հարցադրումներ նրանց նկատմամբ: Այս աշակերտների ներգրավվածությունը դասի հաջորդ փուլին ներգրավվելու համար կազմակերպվեց խմբային աշխատանք համագործակցային մեթոդով: Դասարանը բաժանվեց չորս խմբի, որտեղ յուրաքանչյուր խմբում ընդգրկվեց մեկ ներգրավվող աշակերտ: Յուրաքանչյուր խումբ ստանամ է Մանածագործական նյութերի հակադրման նմուշ օրինակ՝ պատրաստման քայլարշավով: Խումբը քննարկում և փորձում է ըստ նշված պայմանական նշանների կատարել հակադրման քայլաշարը: Խմբի անդամները միմիանց օգնելով պատրաստում են իրենց օրինակները: Յուրաքանչյուր խմբի ներգրավվող աշակերտ ուսուցչի ուղղությամբ ներկայացնում է պատրաստման եղանակը: Խմբի անդամները լրացնում են, եթե դրա կարիքը լինում է: Մյուս խմբիանդամները հարցեր են ուղղում աշխատանքի ներկայացնող խմբի անդամներին: Պատրաստած Մանրաթելերով յուրաքանչյուր խումբ կազմում է կոմպոզիցիա և խմբի համատեղ աշխատանքի արդյունքները գնահատվում են:

Վերջում հանձնարարում է տնային աշխատանք:

Վերլուծություն

«Տեխնոլոգիա» առարկայի հիմնական նպատակն է սովորողին նախապատրաստել ինքնուրույն աշխատանքային կյանքին, դաստիարակել կիրթ, ինքնուրույն, աշխատասեր, ստեղծագործող, համագործակցող, ներգրավվող, նախաձեռնող և ակտիվ քաղաքացի:

Առարկայի շրջանակներում սովորողների զինվում են անհրաժեշտ տեխնոլոգիական գիտելիքներով և ունակություններով ապահովելով անձնային և ազգային լավագույն ավանդույթները պահպանման և զարգացման գործը:

«Տեխնոլոգիա» առարկայի ուսումնառության արդյունքում երեխաների մոտ ձևավորում է գեղարվեստական ճաշակը և ձևավորում է այնպիսի որակներ , ինչպիսիք են՝ ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, ներգրավվածությունը, կարգապահությունը, հանմբերատարությունը, պատասխանատվություն և այլն:

Այսպիսով «Տեխնոլոգիայի » ուսուցումը, տարրական դպրոցից սկսած, պետք է ընդլայնվի սովորողների պոլիտեխնիկական մտահորիզոնը, զարգացնի նրանց

ստեղծագործական ունակությունները , ինչպես նաև
ձևավորել տեխնոլոգիական մշակույթը:

Այս նպատակի իրագործման տեխնիկական պետք է
անցնիձեռքի աշխատանքի միջոցով,
աշխատասիրության և աշխատանքի հանդեպ հարգանքի
ձևավորման ճանապարհով:

Այսպիսով իմ կողմից իրականացված հետազոտական
դասը վերլուծելով ես եկա այն եզրակացության, որ.

1. Խմբային աշխատանքով
2. Անհատական մոտեցումներով
3. Անհատական վերաբերմունքով
4. Ձևավորում գնահատում
5. Առաջ մղող բանավոր հետադարձ կապի
տրամադրումով, ես հասա արդյունքի:

Գրականության ցանկ

1. Ավետիսյան Ժ. „Տեխնոլոգիա" ուսուցչի մեթոդական ձեռնարկ, Երևան, "Աստղիկ գրատուն" 2014:
2. "Տեխնոլոգիա" առարկայի հանրակրթական դպրոցի չափորոշիչ և ծրագիր, հեղինակ Աղաջանյան Մ. , Բարսեղյան Մ. , Հովհաննիսյան Ս. , Երևան 2007:
3. Հայկական Սովետական հանրագիտարան N7 ևN11:
4. Խաչատրյան Ս. Գ. , ուսուցման ժամանակակից մեթոդները: Գյումրի 2006 էջ 96:
5. Հանրակրթական դպրոցի ուսուցչի մեթոդական ձեռնարկ 4- 7րդ դասարան 2001:
6. Հովսեփյան Ս.Գ., Հարությունյան Ա., Աղաջանյան Մ., Վարդան Լ., "Տեխնոլոգիա " Երևան 2001:
7. Պապիկյան Կ., «Տեխնոլոգիայի » դասավանդման մեթոդիկայի 1- 4դասարաններ, Երևան, հեղինակ. հրատ.2019
8. Թորոսյան Կ., «Նախաշավիղ 1 » Երևան, 2014:

Դասապլան- 1

Ուսուցիչ՝ Էլիզա Հարությունյան

Առարկա՝ Տեխնոլոգիա	Ամսաթիվ ՝19.09.2022	Կիսամյակ՝ 1 Դասարանը՝ 5
Թեմա՝	Գծերի տեսակները	
Օգտագործվող նյութերը՝	Քարտեր , գունավոր մատիտներ տետր, դասագիրք, A4 ֆորմատի թուղթ	
Դասի նպատակը՝	1. Իմանալ գծերի տեսակների նշանակությունը 2. Իմանալ, ո՞ր դեպքում են օգտագործում «հոծ հիմնական »գիծը , «բարակ հոծ գիծը» , «գծիկային գիծը» , «զակետային	

	գիծը», «ալիքավոր գիծը» , «արտաբերել գիծը» չափագիծը, չափաթիվը...	
	Ուսուցման արդյունքներ, որոնք փաստեմ, որ ուսուցումը տեղի ունեցավ	
Վերջնարդյունք	Աշակերտները կկարողանան գծերի տեսակները օգտագործել համապատասխան գծապատկերը և կառուցվածքների գծելիս :	

Գործողություններ(Ժամ/տևողություն	Ուսումնական գործունեություն	Ուսումնական գործունեություն	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
	Աշակերտներ	Ուսուցիչ		

5-րոպե-սկիզբ	Բացել, դասագրքերը, պատրաստվել նոր դասին: Ներկայացնել տնային աշխատանքները	Ողջունել դասարանին, ն/բ: Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը		Մտազրոհ
5-րոպե	Աշակերտները հնչեցնում են տարբեր կարծիքներ ստեղծելով հավելյալ գիտելիք թեմայի վերաբերյալ	Կազմակերպել մտազոհ «գիծ» բառով, մտքերի տարափ		Հարցադրումների մեթոդ

<p>10-րոպե</p>	<p>Աշակերտների յուրաքանչյուր խումբ ստանում է քարտեր , բաշխիչ նյութերը :</p>	<p>Հաղորդել նոր թեման անվանակոչված հարցադրումների միջոցով, ապահովելով բոլոր աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսին</p>	<p>Ի՞նչ է իրենից ներկայացնում գծերի տեսակները , և որ դեպքում են օգտագործում հոծ հիմնական գիծը՝ շրջանակի և մակագրության դեպքում, ալիքավոր գծերը գծապատկերը կտրվածքի</p>	<p>Խմբային աշխատանք, համագործակցային ուսուցմամբ</p>
----------------	---	---	--	---

			<p>դեպքում, գծիկային գիծը՝ առարկաների անտեսանելի մասերը ուրվագ ծելու և այլն...</p>	
20-րուպե	<p>Ամեն մի խմբից մեկ աշակերտ պատասխանում է մեկ հարցադրմանը, ըստ անհրաժեշտության ընկերները կատար</p>	<p>Դասարանը բաժանել չորս խմբի, յուրաքանչյուրին բաժանել նախորդ ք պատրաստված մեկական և քարտեր և համապ</p>		

	<p>ում են լրացում ներ</p>	<p>ատասխան բաշխիչ նյութերը: Յուրաքա նյուր խումբ սկսում է աշխատե լ իր առաջադ րանքի վրա, կատարո ւմ են գծապատ կերում, կազմակ երպում քննարկո ւմ, միմիանց տալիս հարցեր և յուրաքա նյուր խմբի մեկ ներգրավ վող աշակեր</p>		
--	-----------------------------------	---	--	--

		<p>տ ուսուցչի պահանջ ով ներկայա ցնում է իր խմբի աշխատ անքր: Խմբի անդամն երը անհրաժ եշտությ ան դեպքում, լրացնում է ն կամ օգնում իրենց ընկերոջը</p>		
5-րդ պե		<p>Քառաբա ժան մեթոդի միջոցով պարզել սովորող ների զգացողո ւթյունն է</p>		<p>Քառաբ աժան մեթոդը</p>

		<p>րը, ինչպես նաև նյութի ընկալմա ն աստիճա նը</p>		
5-րդ պե		<p>Գնահատ ում և տնային աշխատ անքի հանձնա րարում</p>	<p>1. Ի՞նչ գիտեին 2. Ի՞նչը նոր իմացա ն 3. Ի՞նչ էր, որ այդպես էլ անհաս կանալի մնաց: 4. Ի՞նչ զգացող ություն ներ ունեիք դասի սկզբում և դասի վերջում</p>	

			:	
Տնային աշխատանք	Էջ 58, վարժու թյուններ 3,4,5-րդ			

Մեթոդիավորման նախագահ՝ Էլիզա Հարությունյան

Փոխտնօրեն՝ Տիգրան Մնացականյան

Դասապլան- 2

Հավելված

Ուսուցիչ՝ Էլիզա Հարությունյան

Առարկա ՝Տեխնոլոգիա	Ամսաթիվ՝ 11.10.2022	Կիսամյակ՝ 1 Դասարան՝ 3 ա
-----------------------	------------------------	-----------------------------

Թեմա՝	Կարապի պատրաստումը	
Օգտագործվող նյութերը՝	Գունավոր թղթեր, մարատ,	

	սոցիալական, ստվարաթուղթ.	
Դասի նպատակը՝	<p>1. Աշակերտը Ունենա Գիտելիքներ «օրիգամի»</p> <p>Եղանակով Պատրաստել կարապի</p> <p>2. տեղեկություն հավաքել կարապի մասին</p> <p>3. ստեղծագործական ակտիվություն զարգացնել</p> <p>4. գեղագիտական և աշխատանքային դաստիարակություն.</p> <p>5. պահպանել անվտանգության կանոնները.</p> <p>6. Ձևավորել խնայողությունը որպես կանոն.</p>	
	Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ	
Վերջնարդյունք	Աշակերտները	

	<p>կկարողանան ստանալ կախարդական քառակուսի.</p> <ul style="list-style-type: none"> . Ծալման-ծոման միջոցով ստանալ կատակներ. . Ճիշտ ծալել թուղթը . Ճիշտ և խնամքով կատարել ապլիկացիան. . Չնավորել հետաքրքրություն ձեռքի աշխատանքի՝ մասնավորապես թղթով կատարվող աշխատանքների հանդեպ: . Համբերություն . Սկսած գործը մինչև վերջ հասցնելու կարողություն: 	
--	--	--

<p>Ողջունել դասարանին, կատարել ներկա</p>			

<p>բացակա, ստուգել տնային աշխատանքները, անհրաժեշտության դեպքում, կատարել քննարկում, կամ սխալների շտկում:</p>		
<p>Կազմել «մտազոհ», «կարապ» բառով մտքերի տարափ Հաղորդել նոր թեման անվանակոչված հարցադրումների միջոցով, ապահովելով բոլոր աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսին</p>	<p>Կարապի կենդանիների որ դասին է պատկանում: . Եթե կարապի ջրի վրա է լողում, ինչ գույն ենք ընտրում լճակի համար: . Ի՞նչ գիտենք այս կենդանու մասին</p>	<p>«Մտազոհ »</p>
<p>Դասարանը բաժանել չորս խմբի յուրաքանչյուրին բաժանել բաշխիչ նյութերը, ապլիկացիան կատարելու</p>		<p>Խմբային աշխատանք համագործակցային ուսուցմամբ</p>

<p>համար «լճի կտորը» , մարատ, սուսինձ, արդեն աշակերտների կողմից պատրաստված գեղեցիկ կարապները:</p>		
	<p>Ի՞նչ նոր բան սովորեցինք 2.Որտե՞ղ կարող ենք այն օգտագործենլ 3.կարապները պատրաստումը օրինակի եղանակով 4.Ի՞նչ զգացողություններ ունեցաք խմբային աշխատանքների ընթացքում:</p>	
<p>Կատարել դասի անդրադարձ «Քառաբաժան » մեթոդով</p>		<p>Քառաբաժան մեթոդը</p>
<p>Տնային հանձնարարություն</p>	<p>Հորինել հեքիաթ կարապի մասին:</p>	

ւն			
----	--	--	--

Մեթոդախաղորման նախագահ՝ Էլիզա Հարությունյան

Փոխտնօրեն՝

Տիգրան Մնացականյան